## 1899

### ԹՌԼՈՆՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Թռլոնն իջավ խոր ծըմակից,
Մուկը ելավ գետնի տակից,
Պատահեցին ու սեր արին.
— Ո՛հ, առանց քեզ
Զեմ ապրիլ ես,
Ասավ մուկը սիրահարին։
Թռչնի քնքուշ սիրտը մարեց.
Ու շշնջաց ընդարմացած.
— Ես հավիտյան քոնն եմ, հոգիս,
Տար, ուր կուզես, տիրիր կյանքիս...
Բայց, ա՜խ, թե ինձ դավաճանես,
Էն ժամանակ ի՞նչ անեմ ես...
— Ինչ ես ասո՜ւմ... դավաճանե՜մ...
Էն էլ ես քեզ... ա՜խ, ի՞նչ անեմ,
Էրվում եմ ես — չես հավատում...
Ո՛հ, գութ չունես դու քո սրտում —
Զուր եմ փնտրում, Աստված վկա,
Էս կյանքում սեր — չըկա, չըկա...

Ա՛խ, տեր Աստված, իմ սրտի մեջ
Ինչո՞ւ դրիր այս հուրն անշեջ։
Լացեց մուկիկն այս ասելով,
Ու գրկվեցին արտասվելով.
— Ով իմ մուկիկ, մեռե՞լ եմ ես,
Որ [թող անեմ] դու արտասվես...
Ահա
(Ու ճաշակեցին սիրո քաղցրությունը)։
Բայց մուկը ով, թռլոնը ով,
Որ իրար հետ ապրեն սիրով։
— Դե ե՛կ, թռլոնն ասավ յարին,
Թռչենք նստենք մոտիկ ծառին,
Անհոգ [տարփենք] ճյուղի վրա,
Վերից շողա կարմիր արև,
Սեր սոսափե ամեն տերև,
Ու մենք սիրենք, սիրենք անվերջ...
Չէ՛, եկ մտնենք իմ բընի մեջ,
Մութն, առանձին գետնի ծոցում
Սեր վայելենք իմ փափկոցում.
— Չէ՛, ծրմակում,
— Չէ՛, իմ բընում,
Մեկը էսպես,
Մյուսը էնպես
Ծվծվացին,
Գվգվացին —
Այնինչ ժամերն անց են կենում,
Բայց [վեճը] դեռ չի վերջանում.
Հո չի լինիլ ընդմիշտ վիճել,
Պետք է մի կերպ վճռել,

Դու պետք է ինձ լսես, թռլոն
. . . . . .
50 — Չէ, ասացիր ինձ սիրում ես,
Դու պետք է իմ կամքը անես,
— Ոչ, մի անխելք թռչուն ես դու,
— Դու ինչ գիտես, խելք չունես դու.
— Վա՜յ, խելք չունեմ, ա՜խ, խաբեբա,
55 Այդպես չէիր խոսում հապա.
Թռար եկար մութ ծըմակից
Ինձ հանեցիր գետնի տակից —
— [Չէ՞ դու եկար ինձ մոտ]
Լիրբ անամոթ,
60 . . . . . .
[Բայց չի լինի ընդմիշտ վիճել,
Պետք էր մի կերպ կողմ վճռել —]
Եվ, համբերությունը գուցե հատավ,
Մուկը իրեն բունը մտավ.
65 Խեղճ թռչնակը ապուշ մնաց
Բընի առաջ մենակ կանգնած,
Սկիզբը դեռ կատակ թվաց,
Ապա տխուր գվգվաց.
. . . . . .
70 Երբ որ տեսավ դուրս չի գալիս
. . . . . .
Ախ, դու խաբեբա, անգութ, դաժան,
Կեղծավոր, լիրբ, դավաճան,
Այդ էր երդումդ, այդ՝ քո սերը,
75 Խաբեբա են ողջ մկները,
Վայ իմ ծաղիկ հասակին,

[Ու սկսեց վերև թռչել,
Բախտն անիծել ու հառաչել.]
— Ափսո՜ս, խաբվեցի,
— Ափսոս, կապվեցի,
— Ա՜խ...
Եվ թռչնակի քնքուշ սրտում
Անբույժ մնաց այն խոր վերքը,
Եվ այսօր էլ [թռչնակը] լուռ ու տրտում
Իրա անբախտ սիրո երգը
[Խոր] անտառի թավ տեղերում
Երգում է դեռ ու հառաչում.
— Ափսոս, խաբվեցի,
— Ափսոս, կապվեցի,
— Ա՜խ...